նշանաւոր ամրոցը, եւ բանակեցաւ այնտեղ... Խազարը փախստական եղան, եւ մուսլիմները տիրեցին ամրոցին զէնքի զօրութեամբ առաջի Ռաբի ամսին։

107 Թ. Հիշամ յետ կոչեց Ջառռահ ի. Աբդուլլահ Հակամին Հայաստանից եւ Ատրպատականից եւ դրեց այնտեղ իւր եղբայր Մասլամայ ի. Աբդուլմալիքին։ Մասլամայ նշանակեց կառավարիչ Հարաղ ի. Ամր Թային, որ նուաճեց Թուրքաց երկրից մի գաւառ բազմաթիւ քաղաքներով հանդերձ։

112 Թ. սպանեցաւ Ջառռահ ի. Աբդուլլահ Հակամի. պատճառը հետեւեալն էր. ինչպէս պատմեցինք, նախ քան նա խազարաց երկիրը մտաւ, վերջիններս ի փախուստ դարձան, հալածուելով նորանից. ապա խազարը եւ Թուրքերը միացան Ալանաց երկրում եւ՝ պատահելով Ջառռահ ի. Աբդուլլահին, որ իւր հետ ուներ Ասորիքի ժողովուրդը, ճակատեցան սաստիկ բախմամբ, որ մարդ երբ եւ իցէ տեսած էր. զօրքը կանգուն մնաց, թէեւ խազարը եւ Թուրքերը թուով առաւել էին մուսլիմներից։ Ջառռահ իւրայիններով նահատակեցաւ Արտաւիլի դաշտում։ Հայաստանի վերայ կառավարեց նորա եղբայր Հաջջաջ ի. Աբդուլլահ։ (Այլք պատմում են, որ Ջառռահ սպանեցաւ Թալանջարում)։

Խազարը՝ Ջառռահի մահից յետոյ նուաճման տենչանքով վառուած՝ շատպով դիմեցին (մուսլիմների) երկիրները եւ մօտեցան Մոսուլին. Մուսլիմների գործը ծանրացաւ։ Առնելով այս լուրը Հիշամ կոչեց իւր մօտ երանելի Հարաշիին... Հարաշին մեկնեցաւ. որ քաղաքի մօտից նա անցնում էր, ոտի էր կանգնեցնում նորա բնակիչներին, եւ ով սրբազան պատերազմ կը ցանկար, նա տալիս էր իւր հաւանութիւնն։ Այսկերպ շարունակ